

**ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐ-ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**  
**ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ**  
(1917 թ. դեկտեմբեր - 1918 թ. հունվար)

**Մ. Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հայտնի է, որ խորհրդային պատմագրությունը գրեթե 70 տարի խեղաթյուրել է պատմության շատ էջեր՝ նպատակ ունենալով ամեն կերպ թաքցնել խորհրդային վարչակարգի թերացումներն ու թույլ տված սխալները: Սակայն այսօր, երբ արդեն մատչելի են նախկինում արգելված նյութերը, անհրաժեշտ է վերանայել պատմության շատ հարցեր: Նման հարցերից է 1917-1918 թթ. ընթացքում դաշնակցության ու բոլշևիկների միջև ձևավորված հարաբերությունները: Այս խնդրի համատեքստում է նաև մեզ հետաքրքրող թեման՝ բոլշևիկների ու դաշնակցության միջև Թիֆլիսում կայացած բանակցությունները, որի հիմնական աղբյուրը Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» աշխատությունն է<sup>1</sup>: Թեմային անդրադարձել են հիմնականում երկու պատմաբան՝ Լ. Խուրշուդյանը<sup>2</sup> և Ռ. Փիրումյանը<sup>3</sup>: Վերջինս, դաշնակցականամետ հեղինակ լինելով, զարմանալիորեն թուցիկ կերպով է անդրադառնում հարցին: Իսկ Լ. Խուրշուդյանը, ժամանակի պահանջներից ելնելով, օբյեկտիվ չի մոտենում առաջադրված խնդրին: Ի մի բերելով թեմայի վերաբերյալ նախկինում հայտնի, ինչպես նաև նոր աղբյուրներն ու նյութերը՝ կփորձենք ներկայացնել խնդրի իրական պատկերը:

Մինչ Պետրոգրադում նախապատրաստվում էր «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, 1917 թ. դեկտեմբերի 16-ին Ժողկոմխորիը Լենինի նախագահությամբ որոշում է Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար<sup>4</sup>: Վերջինս, համաձայն «Թուրքահայաստանի մասին» դեկրետի, պետք է ապահովեր դրա իրականացումը տեղում, և թվում էր, թե կոմիսարի պաշտոնում նրա նշանակվելը այդ գործընթացի տրամաբանական շարունակությունն էր: Սակայն հենց պաշտոնի անվանումը հուշում էր, որ Մոսկվայում որոշել են կրկին վերահսկողություն սահմանել Կովկասի ժողովուրդների վրա: Դեկտեմբերի 18-ին Լենինի կողմից ստորագրված մանդատն ու 500.000 ռուբլին մեծ դժվարություններով

<sup>1</sup> Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Պէյրոս, 1979, էջ 137-144:

<sup>2</sup> Տե՛ս Լ. Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Եր., 1977, էջ 55-69:

<sup>3</sup> Տե՛ս Ռ. Փիրումյան, Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշևիկ յարաբերությունների շրջանում (1917-1921), Եր., 1997, էջ 64-69:

<sup>4</sup> Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեյուցիան և սովետական իշխանության հարթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 1960, № 100, էջ 143:

Թիֆլիս է Երևան Կամոն (Սյունի Տեր-Պետրոսյանը)։ Այն փաստը, որ Կամոն Թիֆլիսից Բարսի չգնաց, այլ, ընդհակառակը, հունվարի 6-ին Շահումյանը ուղևորվեց Թիֆլիս, խոստով է այն մասին, որ բոլշևիկները կրկին փորձե՞նու էին Թիֆլիսում իշխանությունը վերցնել իրենց ձեռքը։ Սակայն երկրորդ անգամ Շահումյանը պետք է որ դառնա քաղաք լինե՞ր նախկին անհայտնությունում և դաշնակիցներ փնտրե՞ր «թիֆլիսյան ճակատում»։ Անգործ չէր նաև հակաբոլշևիկյան «մենչևիկ-մուսավաթ քրոկը»։ Թիֆլիսում մենչևիկները, հասնագործակցելով մուսավաթի հետ, ծրագրում էին ճակատից տուն վերադարձող ռուս զինվորներից քաղաքում միջոցով զինել իրենց ռազմական ստորաբաժանումները։ Հենց Շահումյանի՝ «Թիֆլիս ժամանելու ատաշին օրերին մենչևիկամուսավաթական զինված ուժերը ձեռնարկեցին հեթանոսական «թալանչիական արշավանքներից» մեկը նահապետող ռուս զինվորների նկատմամբ։ 1917թ. հունվարի 8-ից 10-ը Շամսյոր կայաքարհի մոտ տեղի ունեցավ ռուս զինվորների կոտորած։ Այն իրագործողները Մուսավաթի և Կամոնի մահետեսական ազգային խորհրդի վերահսկողության տակ գտնվող զինված ուժերն էին։ Շամսյորի կայաքարհի դեպքերի մասին Կլաքացյանի գրած տողերից հայտնի է դառնում, որ «... այդ հարձակմանը անձանակ չէին և վրացի վարիչներին ոճանք»։ Կարելի է դատել, որ վրաց մենչևիկները Թիֆլիսում իրենց ծրագրերի մասին էլին բարձրձայնում, հակառակը՝ ձգտում էին քողարկել դրանք։ «Կլաքցի վարիչներից» մեկն էլ Ն. Ռամաշվիլին էր։ Վերջինս Անդրկովկասի կոմիսարիատի հունվարի 6-ին կայացած միասի զեկույցում նշում էր նույն «ռուս զինվորների զինարարիման» և նրանց զենքը վրացական կորպուսին հանձնելու անհրաժեշտությունը մասին։ Այս քայլով մուսավաթյան ու վրաց մենչևիկները քաջադասյառում էին իրենց հակառուսական տրամադրությունները՝ միաժամանակ հայացք բերելով դեպի Քաղալակ միությունը, որի աջակցությունը կարող էին ստանալ մնա՞ն «գուտպետ» գործողությունների շնորհիվ։ Այդ գործողություններով նաև թուլացնում էին բոլշևիկներին, որովհետև նահանջող ռուսական զորքերի մեջ նրանք մեծաթիվ համակիրներ ունեին։ Բնական է, որ հենց նման զինվորներն էլ պետք է համալրեին բոլշևիկների զինված ստորաբաժանումները Անդրկովկասում։ Գրագը էին նաև մենչևիկների՝ ծրագրերը քողարկելու պատճառները։ Նրանք հավանաբար գիտատույն էին, որ Դաշնակցությունը այս հարցում չէր կարող իրենց աջակից լինել, քանի որ դա չէր բխում նրանց շահերից։ Ավելին, Դաշնակցությունը ձգտում էր ռուսական զինված ստորաբաժանումները ամեն զեով պահել Անդրկովկասում, առավել ևս՝ Հայաստանում, քանի որ նրանք հայերի ինչիզակական անվավերագրյալ իրական երաշխիք էին։

Հետագայում մենչևիկներն ու հատկապես Մուսավաթը նման խոչընդոտներ էին տեսելու՞մ գարակալ և Անուանոսի քանակի կազմում ծառայած այն հայ զինվորների համար, որոնք փորձում էին Հայաստան վերադառնալ։ Համաձայն խորիրոգիսայ պատմագրության մեջ եղած տեսակետի՝ քանի որ դեպի Թիֆլիս տանող ճանապարհները զանվում էին մուսավաթական ուժերի վերահսկողության տակ, և նրանց շրջանցելը բավականին

ռվվաք էր, Շահումյանը ստիպված էր 6 օրով կանգ առնել Ելիզավետպոլում՝ հյուրընկալվելով տեղի բոլշևիկյան կառույցի ղեկավար Աբրահամ Մազականի մոտ։ Այստեղից նա հունվարի 13-ին երեք իրոզ ուղեկցությամբ շարունակում է ճանապարհը։ Անցնելով հայաքրեակ շրջաններով՝ նա հունվարի 22-ին հասնում է Թիֆլիս։ Ուշագրավ է, որ Լ. Խորշոդյանը, ներկայացնելով Շահումյանի և ռաշնակցական գործիչների միջև տեղի ունեցած քանակությունների մասին դաշնակցական Ռուբենի հայաճամ տեղեկությունները, լուրջյան է մատնում Թիֆլիս անցնելու հարցում Շահումյանին դաշնակցականների ցուցաբերած օգնության մասին նույն հեղինակի պատմածները՝։ Խորիրոգիսայ պատմագրության մեջ ընդունված է այն տեսակետը, որ համագործակցության հարցում միակ շահագրգիռ կողմը Դաշնակցությունն էր, որի վրա էլ ընկնում էր դրա ձեռնարկած պատասխանատվությունը։ Իրականում բոլշևիկները ևս իրենց մեղքի քաժինը ունեին, որը նրանք չէին ցանկանում ընդունել։ Խճողից հակառակորդ համար ամբողջությամբ ներկայացնե՞ր թիֆլիսյան քանակությունների պատմությունը, որտեղ պարզվում են ծրագրի չիրականացման պատճառները։ Ռուբենի գրքում մենք կարդում ենք. «Երկու անգամ Դամոշ Շավեղյանին տասը տեսակցություններ լինեցին չեռոյ, վերջնական ծրագիր էր մշակուի հայ-բոլշևիկ համագործակցութեան, Ելիզավետեան փողոց թի 194 տան մեջ»։ Թիֆլիսյան քանակությունները սկիզբ են առել դեռ 1917թ. նոյեմբերի վերջին-դեկտեմբերի սկզբին։ 1917թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 8-ը Թիֆլիսում ընթանում էր դաշնակցության հատուկ ժողով, որին մասնակցում էին Մ. Հարությունյանը (ժողովի նախագահ), Աբրահ, Կամոս, Ն. Աղաբաբյանը, Ս. Աբրահայանը, Վ. Խորեմին, Հովի. Ամասունին, Ալ. Խախաբյանը, Վ. Նավասարդյանը, Ռ. Սեյրուջյանը, Սաբերինի Արդուրյանը, Գր. Չամոնյան, Ե. Իշխանյանը, Բ. Տեր-Սիմոնյանը, Մ. Աբրահմանյանը)։ Ժողովի միատեղից մեկում որոշվում է քանակություններ ստեղ նաև բոլշևիկներին հետ։ Սարգիս Աբրահայանը, լիազորված ժողովի կողմից, ղեկավարում էր 4-ին հանդիպումը և նշանակում այդ օրերին<sup>7</sup> Թիֆլիսում գտնվող Մու. Շահումյանի հետ, որին դեպքերի բերումով մասնակցում է նաև դաշնակցական Տեղիչ Իշխանյանը։ Աբրահայանին ուղղված Շահումյանի մեկ հարցին, թե ինքն ի՞նչ են մտածում անել, Աբրահայանը պատասխանել է. «Այդ հարցը ես պետք է տամ ձեզ։ Իշխանությունները դուք էք առել ձեր ձեռքը, գորքը հնձալած «դեպի տուն» նշանաբանով, մերկացնում է ռազմաանկարը, լայն քայ անելով ճանքան բշխման քայլը։ Երբեք է, որ պարզ ու որոշ պիտի առեք, թե ի՞նչ էք անելու։ Լրդեթ, գէք ճակատը պահելու համար, կարո՞ղ էք պահել գորքը իրենց տեղերում, թե՞ ոչ։ Չե՞ր հաստատուն դրական որոշումից է կախված խնդրի լուծումը։

<sup>7</sup> Տե՛ս Լ. Խորշոդյան, Ստեփան Շահումյան, պետական և պարտիական գործունեությունը 1917-1918թթ., Եր., 1959, էջ 148-149, նաև՝ Գ. Առոյան, Տեփան Շահումյան, Жизнь и деятельность (1878-1918), М., 1973, էջ 162-163:

<sup>8</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 141:  
<sup>9</sup> Տե՛ս Լ. Խորշոդյան, Մովսեսական Ռուսաստանը..., էջ 57-58:  
<sup>10</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 141-142:  
<sup>11</sup> Տե՛ս Ե. Իշխանյան, Լեոնային Կարաբաղ (1917-1920), Եր., 1999, էջ 52:  
<sup>12</sup> Տե՛ս Մու. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Կր., 1978, էջ 353:

<sup>8</sup> Ս. Կլաքացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 60:  
<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը։

8. - Գիտը՝ ինչ, պետք է մկտալ ունենա մի բան, որ երկար ժամանակ աշխատած լինելով վրացի մենչևիկների հետ, նրանց ես,- ընդգծում է Շահումյանը,- աեի լա եմ ճանաչում, բան դուք: Գիտեմ, նրանք ուզում է աշխատում են, որ իրենց հետ լինել ու միասին աշխատել. մեզ չստա լա յայտնի է այդ բանը: Նրանք էլ, դուք էլ ազգային կուսակցություն էք, սակայն, չեմ բացցնում, նրանք շուկիման, թթու ազգայնամու են և սեպարատիստ, դուք շուկիմստ չէք և սեպարատիստ չեք, մի բան որի մեջ համոզված եմ: Այնպես որ մեզ կամար ձեռնում է ձեզ հետ բյոլ կազմել: Եւ եթէ դուք մեզ հետ լինել, մենք իր կարողանաք պահել զորքը:

- Սակայն իմ՝ չպէս կարող եք պահել, երբ զորքի մեջ կարգապահությունը բոլորովին խախտուել է, կարգ ու կանոններակա չէ և չի ուզում ենթարկուել:

- Չօրքի մեջ կան բաական գիտակից տարրեր, որոնք մկատում են, որ սեղանկան ժողովուրդներից հայերը բարեացակամ վերաբերմունք ունեն ուսուների հանդեպ և երբ բյոլ կազմի, Մենք իր կարողանաք օգուագործել գիտակից տարրերին ու ցանկալի արդիւնք ունենալ. մենք վստահ ենք, որ յաջողություն կունենանք:

Այսպէս բաական տեճ փոխասացությունը նրանց միջև. եզրակացությունն այն էր, որ երկուստէք մտածեն, կրկին հանդիպումներ ունենան:

Արարտեանը Շահումյանի հետ ունեցած գոյցը նույնութեամբ զեկուցեց խորհրդաժողովին, որը պարզապես տատանման մեջ էր՝ ո՞ր կողմը հակուել: Կարուկ որոշում կայացնել չէր կարողանում, քնական ու հասկանալի աննպատակ պայմանների պատճառով՝: Բանակցությունների ավարտական փուլի մասին Ռուսերն գրում է. «Այն նույն օրը երբ Անդրկովկասեան վարչությունը հրաման կը հաներ գտնել Շահումյանին և զայն ձերբակալել, երբ երկնեան եւ Ազարեան՝ Շահումյանի գլուխը կը պահանջէին Ազգային Խորհուրդի»՝ Ազգային Խորհուրդի գինուրական ուժերի վարչի Ռուբեն Տէր Մինասեանը և Զախրիել Շահումյանի հետ գործունեութեան ճախագիծ կը կազմէին, Մրեանկից ունենալով և՛ Արամի կարծիքները: Գործունեութեան ճախագիծը կը կայանար հետեւեպ հայերեղուր.

1. - Տաճկահայաստանը պիտի լինի անկախ. դիմադրությունը պիտի շարունակուի բուրքերի դէմ. Շահումյանը պիտի ջանա, որ ռուս զորքերը մնան ճակատում:

2. - Անդրկովկասում ստեղծուել է հայկական կանոն, քստ Շահիաբունու սահմանագծման ծրագրի:

3. - Թիֆլիսն ու Բազումը լինելու են ազատ քաղաքներ:

4. - Սարիղամիշ - Կարս հասած 39-րդ զօրաբաժինը պիտի պահել Հայաստանում:

5. - Պարսկաստանից մահանգող Բայրաթովի զօրամասերից մի զօրաբաժնի կանգնեցնել Ջուլֆա - Նախիջեանում:

6. - Ռոմեղացնել Գանձակի հայկական մասը ռազմամբերքներով՝ հոն փայտաղելով Ալեքսանդրապոլի պահեստներից:

7. - Թիֆլիսում կազմում ղարաբաղցիների գունդը ուղարկել Շուշի եւ ուժեղացնել Ղարաբաղը:

8. - Թիֆլիսի մօտ (Տրեխվերուկայ) հասարած գորքերը ոտքով ուղարկել Գանձակ, Ղազախի վրայով:

9. - Բազումից, Գանձակից, Շուշիից ուժերը շարժել եւ Բազու - Թիֆլիս, Բազու - Մրեան՝ ճանապարհը բանալ:

10. - Միմչեա այդ գործողութեանց լինելը, բուշեիկները կը մնան հանգիստ և յեղաշրջման մասին չեն մտածեր:

11. - Չեմեակի խումբը, երրորդ հայկական գունդը, Օսիկ Փիրումեանի հեծելազօրքը, Մովսեսեանի հրետանին, պիտի մնան Թիֆլիսում. երբ Շուշի - Բազու գիծը բացուի, այս ուժերը, կորիկ կազմելով, պիտի համախորքեն իրենց շուրջը բուշեիկ ուժերը և պիտի յեղաշրջում կատարեն: Միմչեա, քէ՛ Մրեանը եւ քէ՛ Թիֆլիսը պիտի մնային ձեականեօրեն հակառակ բուշեիկ շարժման և պիտի պաշտպանէին եղած դրությունը:

Այս ծրագրի մեծ մասը անհնարին եղաւ իրագործել: Շահումյանը, որ Ալեքսանդրապոլ էր անցած, չկարողացաւ խուժան դարձած զօրամասերին իստք հասկցնել: Գանձակում ուժեղացուեց. Ղարաբաղի գունդը դժուարութեան հանդիպեց հասնելու Շուշի, իսկ Բազումը չկարողացաւ կապուել Շուշիի և Գանձակի հետ»: Այն, ինչ տեսնում ենք այս ծրագրում, ամենկին չի համապատասխանում «Թուրքահայաստանի մասին» դեկրետով նախատեսված ռուսական զորքերի դուրսբերման կետին, որը անբույրությամբ անհրազօրծելի էր դարձնում դեկրետի մնացած հայանպատակ կետերը: Մենք հիշեցինք դեկրետի մասին, որպէսզի փորձենք բացատրություն գտնել բուշեիկների մնամ գործելածին: Խորհրդային պատմագրությունը մեջ այդ գործելածին վերաբերյալ ընդունված է այն կարծիքը, որ Ստեփան Շահումյանը կատարում էր ժողովուրդին՝ «Թուրքահայաստանի մասին» դեկրետով և՛ Կովկասի արտակարգ նշանակալիոր կոմիսար նշանակվելու մասին որոշմամբ իր վրա դրված խնդիրները՝: Հետաքրքիր է, քե ինչ խնդիրներ էին դրանք: Անդրադառնալով փաստաթղթերին՝ «Թուրքահայաստանի մասին» դեկրետի 1-ին կետով Ստ. Շահումյանին իրահանգվում էր խաղը հանձնաժողով ստեղծել Արևմտահայաստանի սահմաններից գորքերը հանելու ժամկետ ու եղանակները սահմանելու համար՝, իսկ քիֆլիսյան ծրագրով Շահումյանը պետք է ջանար, որ ռուսական զորքերը մնան ճակատում: Եվ ինքնորդ, որ դեկտեմբերի 16-ին Ստ. Շահումյանին Կովկասի արտակարգ նշանակալիոր կոմիսար նշանակվելու մասին որոշման մեջ, բացի կոմիսարի պաշտոնում նշանակվելուց, որևիցե այլ խնդրի մասին խոսք չկա՝: Անգամ 1917թ. դեկտեմբերի 18-ին՝ Լենինի ստորագրած հրամանագրում մնամ պարտավորեցնող խնդիրների մասին ոչ մի ակնարկ չկա՞: Մեր բոլոր համեմատություններից երևում է, որ նշած երկու փաստաթղթերից և ոչ մեկում չի հիշատակվում Շահումյանի վրա դրված այն խնդիրների մասին,

<sup>14</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 142-143:  
<sup>15</sup> Տես Լ. Խորոջուլյան, Մովսեսեանի Ռուսաստանը..., էջ 59:  
<sup>16</sup> Տես «Հայաստանը միջազգային դիմաճակդիտում և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», եր., 1972, քիվ 236, էջ 418-419:  
<sup>17</sup> Տես Լ. Խորոջուլյան, Ստեփան Շահումյանը..., էջ 147-148:  
<sup>18</sup> Տես «Հնդկոմերքերում սոցիալիստական...», № 100, էջ 143:

որքան նա իր մտքով էր թիֆլիսյան ծրագրի մեջ: Ավելին, Շահումյանի հետ մշակած ծրագրում բացարձակապես հսկայական խնդիրներ էին դրված: 'Կառելով հենց Շահումյանի՝ իրեն կոմսարբ մշահակերու առիթով արած հայտարարությունից (այն տպագրվել է 1918թ. հունվարի 31-ին)<sup>19</sup> պարզ է դառնում նրա հիմնական նպատակը. «Միակ երբև... Կովկասում սովետապետ կիշխանություն ստեղծելն է»<sup>20</sup>: Շահումյանը, հստակ մատնանշելով, որ իր վրա դրված է Կովկասը խորհրդայնացնելու գերխնդիր, բացահայտում է դրանով նաև թիֆլիսյան ծրագրի իրական նպատակը: 'Կա ոչ թե Հայաստանի ազատագրման, այլ խորհրդային իշխանություն հասրահակի համար էր արվում, որի իրականացման համար, ինչպես արդեն մեկ անգամ նշել ենք, բոլշևիկները և մասնավորապես Շահումյանը երկրորդ անգամ չէին կարող անտեսել Անդրկովկասում կարող ուժ համընթացող դաշակցությունը: Վերջինս հետ էլ Շահումյանը կերեց «փոխախաղմուն» համաձայնություն թիֆլիսում: Եվ դատելով նշված համաձայնագրի կետերից՝ 'Կաշնակցությունը պարտավորվում էր օժանդակել բոլշևիկներին Անդրկովկասում բռնորոշային կարգեր հաստատելու գործում՝ փոխարենը ստանալով բոլշևիկների խոստումները Հայկական հարցի դրական լուծման գործում: Իսկ այն, որ 'Կաշնակցությունը ձևակերպելն պետք էր հակաբոլշևիկյան դիրքորոշում ընդունելը, պարզ էր: Նման ծրագրի տպագրման ու հասակապես բացահայտումը անկասած պլաննում էր դաշնակցության և ընդհանրապես հայ ժողովրդի դեմ հանել անըրկովկասյան մնացած ուժերին, որոնք չափերից չէր բխում այդ ծրագրից: Այննայ էր, որ այս ծրագիրը ավելի շուտ մնամ է «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագծին, որտեղ չէր նախատեսվում գորբերը դուրս եկել Արևմտյան Հայաստանից: Թիֆլիսյան ծրագրից նաև յուրահատուկ կերպով բացում էր «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագծում սակայն փակագծերը: Երե նախագծում և նաև բուն դեկրետում բացակայում էր Հայաստանի սահմաններում ներառելիք տարածքների մասին որևէ հստակ տեղեկություն, սակայն թիֆլիսյան ծրագրում պարզ նշվում էր, որ «Անդրկովկասում ստեղծում և հայկական կանտոն, ըստ Շահիաբունու սահմանագծման ծրագրի»: Իսկ Շահիաբունու սահմանագծման ծրագրով, կազմված 1916թ., նախատեսվում էր, որ «Արևելյան Անդրկովկասը բաժանվում էր երկու մասի՝ քրքական և հայկական: Հայկական մասի մեջ մտնելու էին 'Կազախ, Գանձակ, Ջիվանջիք և Շուչի գավառների լեռնային հայաբնակ մասերը և ամբողջ Ջանգեզուրը, բացի Բարգուշալուի հովտի ուր բանի բոլոր գյուղական հասարակություններից, որոնք մնալովու էին 'Կարպազի բրդական գավառից: Գանձակ քաղաքը բաժանվելու էր երկու մասի՝ քրքական և հայկական, Ախալքալաքը, Լոռին և Ծալկայի հայկական մասը պետք է մնալովին նոր կազմվելիք Ալեքսանդրապոլի նահանգին:

Այսպիսով, ստեղծվելու էր հոծ հայ ազգաբնակչություն ունեցող մի շրջան՝ բաղկացած 4 մահազանից՝ Գանձակի, Երևանի, Ալեքսանդրապոլի և 'Կարպի»<sup>21</sup>: Այսպիսի փաստարթի մշակմանը բացի Շահումյանից ու 'Զանուշ Շահվերդյանից, բոլշևիկների կողմից մասնակից էին դարձել նաև

Նազարեթյանը, Կասյանը, ուսուցիչ Խանդոյանը և Ցինցնաձեմ'<sup>22</sup>: Իր աշխատության մեջ Ռուբենը ավելացնում է նաև. «Բացի Շահումյանի հետ այդ բանակցություններից, Երևանում գործակցություն կար բոլշևիկների հետ: Մասնի, որ Երևանը 'Կովկասան Հայաստանի կերտն էր դարձած այդ ժամանակներում: Իսկ այդ կերտնի կերտնական անձն էր Արամը: Նա ուղարկում է թիֆլիսի վրայով այժմ Արամացյանիանաբեր դարձած Մակինցեանին՝ դեպի Մոսկու: Հանի որ Արամը չկայ, Մակինցեանի կը մնայ պարզել այն հրահանգները և սպասելիքները, որ Երևանն ունէր Մոսկուայից: Ինձ յայտնի է միայն այսպիսի, Արամի տոժնակից: «Այսպիսով անկացուրէք: Անհրաժեշտ է: Պէտք է մենք ամէկ կերպ միանանք Ռուստմին (Բազումին): Քու էլը բշիք: Մեր մէջքը թէ ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիւը»: Այս տոժնակը բաւական էր, որ հասկնայի լինէիք Արամի մտահոգութիւնները. նրա ինձան վրայ էլ, Մակինցեանը ապահով հասաւ 'Կաղիկախկան»<sup>23</sup>: Պողոս Մակինցեյանը, ըստ Արշալոյս Աստվածատոյանի, Երևանի հայոց ազգային խորհրդի միակ բոլշևիկ անդամն էր<sup>24</sup>: Բոլշևիկյան կողմի մնամ կազմը և Մակինցեյանին Մոսկվա գործուղելը հուշում էին, որ թիֆլիսյան ծրագրում բոլշևիկյան կենտրոնական ղեկավարությունը պետք է որ իր ներակատարումը ունեցած լինէր: Ի վերջո, ինչպես էլ Շահումյանը հեղինակավոր բոլշևիկ լինէր, մնամ հարցեր ինքնագուլթելու չէր կարող լուծել: Այստեղ կարելի է եզրակացնել, որ բոլշևիկները, ինչպես դաշնակները, երկակի խաղ էին վարում: Մի կողմից նրանք, գիտակցելով իրենց դիրքի բուլոբությունը Բրեստ-Լիտովսկում, պատրաստ էին լուրջ զիջումների՝ այդ թվում Արևմտահայաստանի հաշվին, մյուս կողմից էլ դաշնակցության հետ ծրագրեր էին մշակում Կովկասում խորհրդային կարգեր հաստատելու համար՝ փոխարենը նրանց խոստանալով հայանպաստ ծրագրերի իրականացում: 'Կա ավելի միշտ կիներ անվանել ոչ թե Հայաստանի ազատագրում, այլ փոխանակում: Ըստ Լուրյան՝ բոլշևիկները պետք է ստանանային խորհրդանցակ Արևելյան Հայաստանն ու դաշնակների օժանդակությունը Անդրկովկասի խորհրդայնացման գործում, իսկ փոխարենը ապահովին Արևմտահայաստանի անկախությունն ու այստեղ 'Կաշնակցության իշխանության գալը:

Թիֆլիսյան բանակցություններում բոլշևիկները ավելի քիչ բան ունեին կորցնելու: Ինչպես հետագայ մեջ տվեք, բոլշևիկները 'Կաշնակցությանը արագ փոխարինող գտան՝ ի դեմս Գերմանիայի ու հատկապես Ռուրիիայի: Իսկ դաշնակները, բնակամարտ, կորցնելու շատ բան ունեին, ինչը նրանց ստիպեց դիմելու, այսպես կոչված, «փրկությունային քաղաքականության»: Այն ենթադրում էր, որ 'Կաշնակցությունը պետք է ձևակերպեր Անդրկովկասի միացյալ կառավարությունում հակաբոլշևիկյան կողմնորոշում ցուցաբերելու ու միաժամանակ գաղտնի բանակցություններ վարել բոլշևիկների հետ: Չմայած գործարած ջանքերին՝ բիֆլիսյան բանակցությունները իրականություն դարձան. Շահումյանը չկարողացավ համախախել արեքսանդրապոլյան ուժերը, հայ զինվորականությունը ժամանակին

<sup>19</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 263:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 143:

<sup>21</sup> Տե՛ս «Արամը, մտտումս յիսնամակնի առիթ», Եր., 1991, էջ 90:

չկենտրոնացվեց համաձայնագրով նախատեսված վայրերում: Բոլշևիկյան դեկավարությունն էլ այլ տարբերակ նախընտրեց՝ կնքելով Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը: Բոլշևիկյան կենտրոնի՝ քիֆլիսյան համաձայնագրին ցուցաբերած «պասիվ օժանդակությունը» խոսում է այն մասին, որ նրանք չէին շտապում ընդունել մի փաստաթուղթ, որը կարող էր վնասել իրենց Բրեստ-Լիտովսկի բանակցություններում: Ավելին, բոլշևիկները նախընտրեցին Քառյակ միության օգտին արված զիջումների գնով ապահովել, թեկուզ ժամանակավորապես, որոշակի ներկայություն Անդրկովկասում, քանի դեռ իրենց իշխանության հիմքերը չէին ամրապնդել: Բոլշևիկ-դաշնակցական քիֆլիսյան համաձայնությունը մնաց թղթի վրա: Հետագայում կողմերը նմանատիպ ծրագրերի մշակման փոխարեն նախընտրեցին համագործակցել առանձին հարցերի շուրջ, օրինակ՝ համագործակցությունը Բաքվում, որտեղ կողմերին միավորում էր ընդհանուր բշնամու դեմ համատեղ պայքարը:

**М. С. ОГАННИСЯН — Переговоры большевиков и дашнаков в Тифлисе (декабрь 1917 г. — январь 1918 г.).** — В статье делается попытка представить полную историю рассматриваемой темы. Анализируя касающиеся ее источники и исследования, автор показывает необходимость переговоров и истинные причины их провала.

С 4 декабря до конца января 1917 г. в Тифлисе проходили переговоры между представителями дашнаков и большевиками, завершившиеся подписанием договора. Согласно этому договору, в результате советизации Закавказья большевики должны были обеспечить физическую безопасность армян, признать Восточную Армению самостоятельным округом в составе Советской России, объявить Западную Армению независимой. К сожалению, соглашение не было реализовано, так как, во-первых, большевики не смогли объединить в Закавказье войска, покидающие фронт под знаменем революции, во-вторых, они предпочли Брест-Литовский мирный договор, забыв о подписанном соглашении.